

Բաժին 4.4

ԿՈՂՄԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՄՈՆՐԵԱԼԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒՄ (Լոնդոն, 27-29-ը հունիսի, 1990 թվական)

(Աղբյուր. Կողմերի երկրորդ Հանդիպման հաշվետվության հավելված II)

Հոդված 1. Փոփոխություն

A. Ներածության կետեր

1. Արձանագրության ներածության 6-րդ կետը փոխարինվում է հետևյալով.

«Վճռականությամբ լի՝ պահպանելու օգնային շերտը, նախաձեռնելով նախագորչական միջոցներ՝ անաշառ կերպով հսկելու այն քայլայող նյութերի ընդհանուր համաշխարհային արտանետումները, առաջնային նպատակով հասնելու համար նրանց ոչնչացման՝ հիմնված գիտական մտքի զարգացումների վրա, հաշվի առնելով տեխնիկական և տնտեսական նկատառումները և նկատի ունենալով, զարգացման հետ կապված, զարգացող երկրների կարիքները»:

2. Արձանագրության ներածության 7-րդ կետը փոխարինվում է հետևյալով.

«Ընդունելով, որ պահանջվում է հատուկ նախապատրաստում զարգացող երկրների կարիքները ապահովելու համար, ներառելով լրացուցիչ ֆինանսական աղբյուրների ապահովումը և մուտքը դեպի համապատասխան տեխնոլոգիաներ, հաշվի առնելով, որ կարելի է կանխագորչակել միջոցների ծավալը և ֆոնդերը, ենթադրվում է զգալի տարբերություն համաշխարհային հնարավորությունում՝ լուծելու համար գիտականորեն հաստատված՝ օգնի քայլայման և նրա վճարակար ազդեցությունների խնդիրը»:

3. Արձանագրության ներածության 9-րդ կետը փոխարինվում է հետևյալով.

«Հաշվի առնելով միջազգային համագործակցությանը աջակցելու կարևորությունը տեխնոլոգիայի այլնտրանքային տարբերակների հետազոտման, կատարելագործման ու փոխադրման մեջ, որոնք վերաբերում են օգնային շերտը քայլայող նյութերի արտանետումների հսկմանն ու կրծատմանը, նկատի ունենալով, մասնավորապես, զարգացող երկրների պահանջները»:

B. Հոդված 1. Սահմանումներ

1. Արձանագրության 1-ին հոդվածի 4-րդ կետը փոխարինվում է հետևյալ կետով.

«4. «Կարգավորվող նյութ» նշանակում է՝ սույն Արձանագրության Ա հավելվածում կամ Բ հավելվածում գետեղված նյութ, որը գործում է ինքնուրույն կամ խառնուրդում: Այն պարունակում է ցանկացած նմանատիպ նյութի իզոմներներ, բացառությամբ այն նյութերի, որոնք նշված են համապատասխան հավելվածում, սակայն չի վերաբերում ցանկացած հսկող նյութի կամ խառնուրդի, որը հանդիսանում է բաղադրիչ մաս պատրաստի արտադրում՝ ունեցող այլ ձև, քան տարողությունը՝ կիրառվող այդ նյութը փոխադրելու կամ պահելու համար»:

2. Արձանագրության 1-ին հոդվածի 5-րդ կետը փոխարինվում է հետևյալ կետով.

«5. «Արտադրություն» նշանակում է՝ արտադրված կարգավորվող նյութերի քանակը, բացառությամբ այն քանակի, որը ոչնչանում է Կողմերի կողմից հաստատված տեխնոլոգիաների միջոցով, և բացառությամբ այն քանակի, որն ամբողջությամբ օգտագործվում է որպես արդյունաբերական հումք քիմիական նյութերի արտադրության համար: Հաշվառված և կրկնակի օգտագործման ենթարկված նյութերի քանակը չի կարող համարվել «արտադրություն»:

3. Արձանագրության 1-ին հոդվածին ավելացվում է հետևյալ կետը.

«9. «Փոխադրելի նյութ» նշանակում է՝ Արձանագրության C հավելվածում զետեղված նյութ, որը գործում է ինքնուրույն կամ խառնուրդում: Այն պարունակում է ցանկացած նման նյութի իզոմերներ, բացառությամբ այն նյութերի, որոնք թվարկված են C հավելվածում, սակայն չի վերաբերում ցանկացած նման նյութի կամ խառնուրդի, որը հանդիսանում է բաղադրիչ մաս պատրաստի արտադրանքում՝ ունեցող այլ ձև, քան տարողությունը՝ կիրառվող այդ նյութը փոխադրելու կամ պահելու համար»:

C. Հոդված 2, կետ 5-րդ

Արձանագրության 2-րդ հոդվածի 5-րդ կետը փոխարինվում է հետևյալ կետով.

«5. Ցանկացած Կողմ կարող է մեկ կամ ավելի կարգավորման ժամանակարնթացքում փոխանցել որևէ այլ Կողմի 2A-ից 2E հոդվածներում զետեղված արտադրության իր հաշվարկային մակարդակի ցանկացած չափը՝ ապահովելով, որ Կողմերի արտադրության ընդհանուր համակցված հաշվարկային մակարդակը, որը վերաբերում է կարգավորվող նյութերի ցանկացած խմբին, չի գերազանցի այդ հոդվածներում նշված արտադրության սահմանները՝ նախատեսված այդ խմբի համար: Արտադրանքի նման փոխանցման մասին քարտուղարությանը տեղեկացնում է յուրաքանչյուր շահագրգիռ Կողմի՝ հայտնելով նման փոխանցման ժամկետները և այն ժամանակամիջոցը, որի ընթացքում այն կիրառում է»:

D. Հոդված 2, կետ 6-րդ

2-րդ հոդվածի 6-րդ կետում առաջին անգամ հիշատակվող «կարգավորվող նյութեր» բառերից հետո պետք է ավելացվեն հետևյալ բառերը.

«հավելված A կամ հավելված B»:

E. Հոդված 2, կետ 8a

Արձանագրության 2-րդ հոդվածի 8a կետում «սույն հոդվածը» բառերից հետո պետք է ավելացնել հետևյալ բառերը.

«և 2A-ից 2E հոդվածներ »:

F. Հոդված 2, կետ 9a i

Արձանագրության 2-րդ հոդվածի 9a i կետում հետևյալ բառերը պետք է ավելացվեն «հավելված A» բառերից հետո.

«և/կամ հավելված B»:

G. Հոդված 2, կետ 9a ii

Արձանագրության 2-րդ հոդվածի 9a ii կետից պետք է հանվեն հետևյալ բառերը. «համեմատությամբ 1986թ. մակարդակների»:

Հ. Հոդված 2, կետ 9c

Արձանագրության 2-րդ հոդվածի 9c կետից պետք է հանել հետևյալ բառերը.

«Աերկայացնելով Կողմերի կողմից կարգավորվող նյութերի ընդհանուր գործածության առնվազն 50%-ը»

և փոխարինել.

«Աերկայացնելով 5-րդ հոդվածի 1-ին կետի ներքո գործող՝ քվեարկությանը ներկա գտնվող ու մասնակցող Կողմերի մեծամասնությունը և այդ կետի ներքո չգործող Կողմերի մեծամասնությունը, որոնք ներկա են գտնվում և մասնակցում են քվեարկությանը»:

I. Հոդված 2, կետ 10b

Արձանագրության 2-րդ հոդվածի 10b կետը հանել: 2-րդ հոդվածի 10a կետը դառնում է 10-րդ կետը:

J. Հոդված 2, կետ 11

Արձանագրության 2-րդ հոդվածի 11-րդ կետում «սույն հոդված» բառերից հետո պետք է ավելացվեն հետևյալ բառերը.

«և 2A-ից 2E հոդվածներ»:

K. Հոդված 2C. Ամբողջությամբ հալոգենացված այլ ՔՖԱ-ներ

Հետևյալ կետերը պետք է ավելացվեն Արձանագրությանը՝ որպես հոդված 2C.

«Հոդված 2C. Ամբողջությամբ հալոգենացված այլ ՔՖԱ-ներ

1. Յուրաքանչյուր Կողմ երաշխավորում է, որ, սկսած 1993 թ. հունվարի 1-ից, տասներկու ամսվա համար և ամեն հաջորդող տասներկուամսյա ժամանակաշրթացքում Բ հավելվածի I խմբում գետեղված կարգավորվող նյութերի օգտագործման հաշվարկային մակարդակը տարեկան չի գերազանցի 1989թ. օգտագործման իր հաշվարկային մակարդակի 80%-ը: Յուրաքանչյուր Կողմ, որն արտադրում է այս նյութերից մեկ կամ մի քանիսը, միևնույն ժամանակահատվածի համար երաշխավորում է, որ նյութերի արտադրության իր հաշվարկային մակարդակը տարեկան չի գերազանցի 1989թ. արտադրության իր հաշվարկային մակարդակի 80%-ը: Այնուամենայնիվ, 5-րդ հոդվածի 1-ին կետի ներքո գործող Կողմերի հիմնական ներքին պահանջները բավարարելու համար դրանց արտադրության հաշվարկային մակարդակը կարող է գերազանցել այդ սահմանը 1989թ. արտադրության իրենց հաշվարկային մակարդակի մինչև 10-ը տոկոսի չափով:
2. Յուրաքանչյուր Կողմ երաշխավորում է, որ, սկսած 1997թ. հունվարի 1-ից, տասներկուամսյա ժամանակահատվածում և ամեն հաջորդող տասներկու ամսվա ընթացքում Բ հավելվածի I խմբում գետեղված կարգավորվող նյութերի օգտագործման հաշվարկային մակարդակը տարեկան չի գերազանցի 1989թ. օգտագործման իր հաշվարկային մակարդակի 50%-ը: Յուրաքանչյուր Կողմ, որն արտադրում է այս նյութերից մեկ կամ մի քանիսը, այդ ժամանակաշրջանի համար երաշխավորում է, որ նյութերի արտադրության իր հաշվարկային մակարդակը տարեկան չի գերազանցի 1989թ. արտադրության իր հաշվարկային մակարդակի 50%-ը: Սակայն 5-րդ հոդվածի 1-ին կետի ներքո գործող Կողմերի հիմնական ներքին պահանջները բավարարելու համար դրանց արտադրության հաշվարկային

մակարդակը կարող է գերազանցել այդ սահմանը 1989թ. արտադրության իրենց հաշվարկային մակարդակի մինչև 10%-ը տոկոսի չափով:

3. Յուրաքանչյուր Կողմ երաշխավորում է, որ տասներկուամսյա ժամանակահատվածում, սկսած 2000թ. հունվարի 1-ից, և հետագա յուրաքանչյուր տասներկուամսյա ժամանակաշրջանում Բ հավելվածի I խմբի կարգավորվող նյութերի օգտագործման իր հաշվարկային մակարդակը չի գերազանցի գրոն: Յուրաքանչյուր Կողմ, որն արտադրում է այս նյութերից մեկը կամ մի քանիսը, պետք է մինչույն ժամանակաշրջանում երաշխավորի, որ նյութերի արտադրության իր հաշվարկային մակարդակը չի գերազանցում գրոն: Սակայն 5-րդ հոդվածի 1-ին կետի ներքո գործող Կողմերի հիմնական ներքին պահանջները բավարարելու համար դրանց արտադրության հաշվարկային մակարդակը կարող է գերազանցել այդ սահմանը 1989թ. արտադրության իրենց հաշվարկային մակարդակի մինչև 50%-ի չափով»:

L. Հոդված 2D. Ածխածնի տեսրաքլորիդ

Հետևյալ կետերը պետք է ավելացվեն Արձանագրությանը՝ որպես հոդված 2D.

«Հոդված 2D. Ածխածնի տեսրաքլորիդ

1. Յուրաքանչյուր Կողմ երաշխավորում է, որ տասներկուամսյա ժամանակահատվածում, սկսած 1995թ. հունվարի 1-ից, և հետագա յուրաքանչյուր տասներկուամսյա ժամանակահատվածում Բ հավելվածի II խմբի կարգավորվող նյութի օգտագործման իր հաշվարկային մակարդակը տարեկան չի գերազանցի 1989թ. օգտագործման իր հաշվարկային մակարդակի 50%-ը: Նյութ արտադրող յուրաքանչյուր Կողմ մինչույն ժամանակաշրջանում երաշխավորում է, որ նյութի արտադրության իր հաշվարկային մակարդակը տարեկան չի գերազանցի 1989թ. արտադրության իր հաշվարկային մակարդակի 50%: Սակայն 5-րդ հոդվածի 1-ին կետի ներքո գործող Կողմերի հիմնական ներքին պահանջները բավարարելու համար դրա արտադրության հաշվարկային մակարդակը կարող է գերազանցել այդ սահմանը 1989թ. արտադրության իրենց հաշվարկային մակարդակի մինչև 10%-ի չափով:
2. Յուրաքանչյուր Կողմ երաշխավորում է, որ տասներկուամսյա ժամանակահատվածում, սկսած 2000թ. հունվարի 1-ից, և հետագա յուրաքանչյուր տասներկուամսյա ժամանակահատվածում Բ հավելվածի II խմբի կարգավորվող նյութի օգտագործման իր հաշվարկային մակարդակը չի գերազանցի գրոն: Այդ նյութն արտադրող յուրաքանչյուր Կողմ մինչույն ժամանակաշրջանում երաշխավորում է, որ տվյալ նյութի արտադրության իր հաշվարկային մակարդակը չի գերազանցի գրոն: Սակայն 5-րդ հոդվածի 1-ին կետի ներքո գործող Կողմերի հիմնական ներքին պահանջները բավարարելու համար դրա արտադրության հաշվարկային մակարդակը կարող է գերազանցել այդ սահմանը 1989թ. արտադրության իրենց հաշվարկային մակարդակի մինչև 50%-ի չափով:

M. Հոդված 2E. 1,1,1- եռաքլորեթան (մեթիլ քլորոֆորմ)

Հետևյալ կետերը պետք է ավելացվեն Արձանագրությանը՝ որպես հոդված 2E.

Հոդված 2E. 1,1,1- եռաքլորեթան (մեթիլ քլորոֆորմ)

1. Յուրաքանչյուր Կողմ երաշխավորում է, որ տասներկուամսյա ժամանակահատվածում, սկսած 1993թ. հունվարի 1-ից, և հետագա յուրաքանչյուր

տասներկուամսյա ժամանակահատվածում Յ հավելվածի III խմբի կարգավորվող նյութի արտադրության իր հաշվարկային մակարդակը տարեկան չի գերազանցի 1989թ. օգտագործման իր հաշվարկային մակարդակը: Այդ նյութը արտադրող յուրաքանչյուր Կողմ միևնույն ժամանակահատվածներում երաշխավորում է, որ տվյալ նյութի արտադրության իր հաշվարկային մակարդակը տարեկան չի գերազանցի 1989թ. արտադրության իր հաշվարկային մակարդակը: Սակայն 5-րդ հոդվածի 1-ին կետի ներքո գործող Կողմերի հիմնական ներքին պահանջները բավարարելու համար դրա արտադրության հաշվարկային մակարդակը կարող է գերազանցել այդ սահմանը 1989թ. արտադրության իրենց հաշվարկային մակարդակի մինչև 10%-ի չափով:

2. Յուրաքանչյուր Կողմ երաշխավորում է, որ տասներկուամսյա ժամանակահատվածում, սկսած 1995թ. հունվարի 1-ից, և հետագա յուրաքանչյուր տասներկուամսյա ժամանակահատվածներում Յ հավելվածի III խմբի կարգավորվող նյութի օգտագործման իր հաշվարկային մակարդակը տարեկան չի գերազանցի 1989թ. օգտագործման իր հաշվարկային մակարդակի 70%-ը: Տվյալ նյութը արտադրող յուրաքանչյուր Կողմ միևնույն ժամանակահատվածներում երաշխավորում է, որ տվյալ նյութի արտադրության իր հաշվարկային մակարդակը տարեկան չի գերազանցի 1989թ. օգտագործման իր հաշվարկային մակարդակի 70%-ը: Սակայն 5-րդ հոդվածի 1-ին կետի ներքո գործող Կողմերի հիմնական ներքին պահանջները բավարարելու համար դրա արտադրության հաշվարկային մակարդակը կարող է գերազանցել այդ սահմանը 1989թ. արտադրության իրենց հաշվարկային մակարդակի մինչև 10%-ի չափով:
3. Յուրաքանչյուր Կողմ երաշխավորում է, որ տասներկուամսյա ժամանակահատվածում, սկսած 2000թ. հունվարի 1-ից, և հետագա յուրաքանչյուր տասներկուամսյա ժամանակահատվածում Յ հավելվածի III խմբի կարգավորվող նյութի օգտագործման իր հաշվարկային մակարդակը տարեկան չի գերազանցի 1989թ. օգտագործման իր հաշվարկային մակարդակի 30%-ը: Այդ նյութը արտադրող յուրաքանչյուր Կողմ միևնույն ժամանակահատվածներում երաշխավորում է, որ նյութի արտադրության իր հաշվարկային մակարդակը տարեկան չի գերազանցի 1989թ. արտադրության իր հաշվարկային մակարդակի 30%-ը: Սակայն 5-րդ հոդվածի 1-ին կետի ներքո գործող Կողմերի հիմնական ներքին պահանջները բավարարելու համար դրա արտադրության հաշվարկային մակարդակը կարող է գերազանցել այդ սահմանը 1989թ. արտադրության իրենց հաշվարկային մակարդակի մինչև 10%-ի չափով:
4. Յուրաքանչյուր Կողմ երաշխավորում է, որ տասներկուամսյա ժամանակահատվածի համար, սկսած 2005թ. հունվարի 1-ից, և հետագա յուրաքանչյուր տասներկուամսյա ժամանակահատվածում Յ հավելվածի III խմբի կարգավորվող նյութի օգտագործման իր հաշվարկային մակարդակը չի գերազանցի գրուն: Այդ նյութը արտադրող յուրաքանչյուր Կողմ միևնույն ժամանակահատվածներում երաշխավորում է, որ այդ նյութի արտադրության իր հաշվարկային մակարդակը չի գերազանցի գրուն: Սակայն 5-րդ հոդվածի 1-ին կետի ներքո գործող Կողմերի հիմնական ներքին պահանջները բավարարելու համար դրա հաշվարկային մակարդակը կարող է գերազանցել այդ սահմանը 1989թ. արտադրության իրենց հաշվարկային մակարդակի մինչև 15%-ի չափով:
5. 1992թ. Կողմերը կվերանայեն կրճատումների ավելի արագ ժամանակացույցի հավանականությունը այն բանի հետ, որը ներկայացված է այս հոդվածում:

N. Հոդված 3. Կարգավորվող մակարդակների հաշվարկումը

1. Արձանագրության 3-րդ հոդվածում «հոդված 2» բառերից հետո պետք է ավելացնել հետևյալը.
«2A-ից 2E»:

2. Հետևյալ բառերը պետք է ավելացվեն Արձանագրության 3-րդ հոդվածի՝ ամեն անգամ հանդիպող «հավելված A» բառերից հետո:

«կամ B հավելված »:

O. Հոդված 4. Առևտրի կարգավորումը ոչ Կողմ երկրների հետ

1. 4-րդ հոդվածի 1-5-րդ կետերը փոխարինվում են հետևյալ կետերով.

«1. Սկսած 1990թ. հունվարի 1-ից՝ յուրաքանչյուր Կողմ արգելում է Ա հավելվածում թվարկված կարգավորվող նյութերի ներմուծումը սույն Արձանագրությանը Կողմ չհանդիսացող ցանկացած երկրից:

1. bis. Սույն կետի ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո՝ մեկ տարվա ընթացքում, յուրաքանչյուր Կողմ արգելում է Բ հավելվածում թվարկված կարգավորվող նյութերի ներմուծումը սույն Արձանագրությանը Կողմ չհանդիսացող ցանկացած երկրից:

2. Սկսած 1993թ. հունվարի 1-ից՝ յուրաքանչյուր Կողմ արգելում է Ա հավելվածում թվարկված ցանկացած նյութի արտահանումը սույն Արձանագրությանը Կողմ չհանդիսացող ցանկացած երկիր:

2. bis. Սույն կետի ուժի մեջ մտնելու ամսաթվից մեկ տարի անց յուրաքանչյուր Կողմ արգելում է Բ հավելվածում թվարկված կարգավորվող նյութերի արտահանումը սույն Արձանագրությանը Կողմ չհանդիսացող ցանկացած երկիր:

3. 1992թ. հունվարի 1-ին Կողմերը, հետևելով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի ընթացակարգերին, մի հավելվածում կմշակեն այն արտադրանքների ցանկը, որոնք պարունակում են Ա հավելվածում թվարկված կարգավորվող նյութեր: Այն Կողմերը, որոնք դեմ չեն եղել հավելվածի այդ ընթացակարգերին, պետք է արգելեն, այդ հավելվածի ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, նման ապրանքների ներմուծումը սույն Արձանագրությանը Կողմ չհանդիսացող ցանկացած երկրից:

3. bis. Սույն կետի ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո՝ երեք տարվա ընթացքում, Կողմերը, հետևելով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի ընթացակարգերին, կկազմեն, որպես հավելված, այն ապրանքների ցանկը, որոնք պարունակում են Բ հավելվածում թվարկված կարգավորվող նյութերը: Այն Կողմերը, որոնք դեմ չեն եղել հավելվածի այդ ընթացակարգերին, պետք է հավելվածի ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, արգելեն այդ ապրանքների ներմուծումը սույն Արձանագրությանը Կողմ չհանդիսացող ցանկացած երկրից:

4. 1994 թ. հունվարի 1-ին Կողմերը պետք է որոշեն արգելման և սահմանափակման իրագործումը սույն Արձանագրությանը Կողմ չհանդիսացող երկրներից, Ա հավելվածում թվարկված կարգավորվող նյութերով արտադրված, բայց ոչ պարունակելի արտադրանքի ներմուծումը: Եթե որոշման ընդունումը իրագործելի է, Կողմերը, հետևելով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի ընթացակարգերին, կազմում են, որպես հավելված, նման արտադրանքների ցանկ: Այն Կողմերը, որոնք դեմ չեն եղել այս գործողությունների հավելվածին, պետք է այդ հավելվածի ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, արգելեն այդ արտադրանքների ներմուծումը սույն Արձանագրությանը Կողմ չհանդիսացող ցանկացած երկրից:

4. bis. Սույն կետի ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո՝ կիսակ տարվա ընթացքում, Կողմերը պետք է որոշեն արգելման և սահմանափակման իրագործումը այն երկրներից, որոնք չեն հանդիսանում սույն Արձանագրության կողմ, Բ հավելվածում թվարկված կարգավորվող նյութերով, բայց ոչ նրանց պարունակությամբ արտադրված արտադրանքների ներմուծումը: Եթե որոշման ընդունումը իրագործելի է, Կողմերը, հետևելով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի ընթացակարգերին, կազմում են, որպես հավելված, նման արտադրանքների ցանկ: Այն Կողմերը, որոնք դեմ չեն եղել հավելվածին, համաձայն այդ ընթացակարգերի՝ արգելում են կամ սահմանափակում, հավելվածի ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, այդ արտադրանքների ներմուծումը սույն Արձանագրությանը Կողմ չհանդիսացող ցանկացած երկրից:

5. Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է հնարավորին չափով խրախուսել կարգավորվող նյութերի արտադրման և օգտագործման տեխնոլոգիաների արտահանումը սույն Արձանագրությանը Կողմ չհանդիսացող ցանկացած պետություն:

2. Արձանագրության 4-րդ հոդվածի 8-րդ կետը փոխարինվում է հետևյալ կետով.

«8. Չնայած սույն հոդվածի դրույթներին՝ ներմուծումը, որին վերաբերում են 1-ին, 1-ին bis, 3-րդ, 3-րդ bis, 4-րդ և 4-րդ bis կետերը, և արտահանումը, որին վերաբերում են 2-րդ և 2-րդ bis կետերը, կարող են թույլ տրվել սույն Արձանագրությանը Կողմ չհանդիսացող երկրներից կամ ցանկացած նման երկիր, եթե Կողմերի Հանդիպումը որոշում է, որ նա լիովին կատարում է 2-րդ հոդվածի, 2A-ից 2E հոդվածների և սույն հոդվածի պայմանները և ներկայացրել է տվյալներ դրա վերաբերյալ, ինչպես նշված է 7-րդ հոդվածում»:

3. Արձանագրության 4-րդ հոդվածին ավելանում է հետևյալ կետը՝ որպես 9-րդ կետ:

«9. Սույն հոդվածի նպատակների համար «Սույն Արձանագրությանը Կողմ չհանդիսացող երկիր» հասկացությունը ենթադրում է, ցանկացած առանձին կարգավորվող նյութի նկատմամբ, պետություն կամ տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպություն, որը չի համաձայնել պարտավորված լինել այդ նյութի նկատմամբ գործող կարգավորման միջոցներով»:

P. Հոդված 5. Զարգացող երկրների հատուկ վիճակը

Արձանագրության 5-րդ հոդվածը փոխարինվում է հետևյալով.

1. Ցանկացած Կողմ հանդիսացող զարգացող երկիր, որի A հավելվածի կարգավորվող նյութերի օգտագործման տարեկան հաշվարկային մակարդակը ավելի քիչ է, քան յուրաքանչյուր անձին ընկնող 0.3 կգ-ը, որա համար Արձանագրության ուժի մեջ մտնելու ամսաթվով կամ ցանկացած հաջորդող ժամանակ, մինչ 1999թ. հունվարի 1-ը, իրավունք է վերապահում իր ներքին պահանջները բավարարելու նպատակով տասը տարով հետաձգել իր համաձայնությունը կարգավորվող միջոցների կապակցությամբ՝ նախատեսված 2A-ից 2E հոդվածներում:

2. Այնուամենայնիվ, ցանկացած Կողմ, որը գործում է սույն հոդվածի 1-ին կետի ներքո, չպետք է գերազանցի Ա հավելվածում նշված կարգավորվող նյութերի օգտագործման տարեկան հաշվարկային մակարդակը յուրաքանչյուր անձին ընկնող 0.3 կգ-ից և ոչ էլ Բ հավելվածում նշված կարգավորվող նյութերի օգտագործման տարեկան հաշվարկային մակարդակը յուրաքանչյուր անձին ընկնող 0.2 կգ-ից:

3. Սույն հոդվածի 1-ին կետի ներքո գործող ցանկացած Կողմ, իրագործելով 2A-ից 2E հոդվածներում ներկայացված կարգավորվող միջոցները, իրեն իրավունք է վերապահում՝ օգտագործելու.

ա) կարգավորվող նյութերի համար. նշված A հավելվածում կամ 1995-1997թթ. ներառյալ ժամանակամիջոցի համար օգտագործման միջին տարեկան հաշվարկային մակարդակը կամ յուրաքանչյուր անձին ընկնող 0.3 կգ օգտագործման հաշվարկային մակարդակը՝ կախված նրանից, թե որ մակարդակն է համարվում ցածր, որպես հիմք կարգավորվող միջոցներին հետևելու օրինաչափության հաստատմանը,

բ) կարգավորվող նյութերի համար. նշված B հավելվածում կամ 1998-2000թթ. ներառյալ ժամանակամիջոցի համար օգտագործման միջին տարեկան հաշվարկային մակարդակը կամ յուրաքանչյուր անձին ընկնող 0.2 կգ օգտագործման հաշվարկային մակարդակը՝ կախված նրանից, թե որ մակարդակն է համարվում ցածր, որպես հիմք կարգավորվող միջոցներին հետևելու օրինաչափության հաստատմանը:

4. Եթե սույն հոդվածի 1-ին կետի ներքո գործող Կողմը ցանկացած ժամանակ, մինչև 2A-ից 2E հոդվածներում նախատեսված կարգավորման միջոցների պարտավորությունները դառնան կիրառելի իր համար, գտնում է անհնարին՝ ձեռք բերելու կարգավորվող նյութերի համապատասխան մատակարարությունը, նա կարող է դրա մասին տեղեկացնել քարտուղարությանը: Քարտուղարությունը անհապաղ հանձնում է այդ տեղեկագրի պատճենը Կողմերին, որոնք կվերանայեն գործը իրենց հաջորդ Հանդիպմանը և կորոշեն համապատասխան միջոցառման նախաձեռնման մասին:

5. Սույն հոդվածի 1-ին կետի ներքո գործող Կողմերի պարտավորությունները իրականացնելու համար 2A-ից 2E հոդվածներում ներկայացված կարգավորման միջոցները և դրանց իրականացումը իրենց կողմից կախված կլինի ֆինանսական համագործակցության արդյունավետ իրականացումից՝ համաձայն 10-րդ հոդվածի, և փոխադրել սարքավորումները՝ համաձայն 10A հոդվածի:

6. Սույն հոդվածի 1-ին կետի ներքո գործող ցանկացած Կողմ ցանկացած ժամանակ կարող է քարտուղարությանը գրավոր տեղեկացնել, որ, նախաձեռնելով բոլոր գործնական քայլերը, անհնար է իրականացնել ցանկացած կամ բոլոր պարտավորությունները՝ շարադրված 2A-ից 2E հոդվածներում, 10-րդ և 10A հոդվածների անբավարար իրականացման պատճառով: Քարտուղարությունը անհապաղ փոխանցում է այդ տեղեկագրի պատճենը Կողմերին, որոնք կվերանայեն գործը իրենց հաջորդ Հանդիպմանը՝ տալով համապատասխան ճանաչում սույն հոդվածի 5-րդ կետին, և որոշում կընդունեն համապատասխան միջոցառումների ձեռնարկման մասին:

7. Կողմերի տեղեկացման և Հանդիպման միջև ընկած ժամանակաշրացքում, որի ժամանակ պետք է ընդունվեն որոշումներ, որոնք վերաբերում են 6-րդ կետի անհրաժեշտ միջոցառումներին, կամ ցանկացած հետագա ժամանակաշրացքում տեղեկացվող Կողմին Կողմերի Հանդիպման որոշմամբ չեն ձեռնարկվում ընթացակարգեր՝ վերաբերող անհետևողականությանը, ճշված 8-րդ հոդվածում:

8. Կողմերի Հանդիպումը ոչ ուշ, քան 1995թ. կանցկացնի սույն հոդվածի 1-ի կետի ներքո գործող Կողմերի իրավիճակի վերանայում, ներառելով ֆինանսական համագործակցության արդյունավետ իրականացումը և տեխնոլոգիայի փոխանցումը իրենց, և կանցկացնի ցանկացած վերատուգում, որը կարող է անհրաժեշտ համարվել կարգավորման միջոցների ժամանակացույցի նկատմամբ՝ կիրառելի այդ Կողմերի համար:

9. Սույն հոդվածի 4-րդ, 6-րդ և 7-րդ կետերում ներկայացված Կողմերի որոշումները ընդունվում են համաձայն նույն գործընթացի՝ կիրառվող որոշումների ընդունման համար՝ ըստ 10-րդ հոդվածի:

Q. Հոդված 6. Հսկման միջոցների գնահատումն ու վերանայումը

Արձանագրության 6-րդ հոդվածում «հոդված 2» բառերից հետո ավելացվում են հետևյալ բառերը.

«2A-ից 2E հոդվածներում և C հավելվածի I խմբի փոխադրելի նյութերի արտադրմանը, ներմուծմանը և արտահանմանը վերաբերող իրավիճակը»:

R. Հոդված 7. Տվյալների մասին հաշվետվություն

Արձանագրության 7-րդ հոդվածը փոխարինվում է հետևյալով.

1. Յուրաքանչյուր Կողմ քարտուղարությանը Կողմ դառնալուց երեք ամսվա ընթացքում ներկայացնում է A հավելվածի յուրաքանչյուր կարգավորվող նյութի՝ իր արտադրության, ներմուծման և արտահանման վիճակագրական տվյալները 1986թ. համար կամ նման բնույթի լավագույն հնարավոր գնահատումները, եթե փաստացի տվյալներ չկան:

2. Յուրաքանչյուր Կողմ քարտուղարությանը ներկայացնում է Յ հավելվածի կարգավորվող նյութերից յուրաքանչյուրի արտադրության, ներմուծման և արտահանման և Ը հավելվածի Ի խորի փոխադրելի նյութերից յուրաքանչյուրի վիճակագրական տվյալները 1989թ. համար կամ նման բնույթի լավագույն հնարավոր գնահատումները, եթե փաստացի տվյալները բացակայում են, ոչ ուշ, քան երեք ամիս անց այն ամսաթվից, եթե Արձանագրության պայմանները՝ վերաբերող Յ հավելվածի նյութերին, այդ Կողմի համար մտնում են ուժի մեջ:

3. Յուրաքանչյուր Կողմ քարտուղարությանը ներկայացնում է վիճակագրական տվյալներ իր տարեկան արտադրության (ինչպես նկարագրված է 1-ին հոդվածի 5-րդ կետում) և առանձին:

- արդյունաբերական հումքի համար օգտագործված ծավալները,
- Կողմերի հաստատած տեխնոլոգիաներով ոչնչացված ծավալները,
- Կողմ և ոչ Կողմ երկրների ներմուծումները և արտահանումները, համապատասխանորեն,

յուրաքանչյուր հսկող նյութի՝ գետեղված A և B հավելվածներում, ինչպես նաև Ը հավելվածի Ի խումք փոխադրելի նյութերի՝ այն տարվա համար, որի ընթացքում B հավելվածի նյութերին վերաբերող պայմանները ուժի մեջ են մտել այդ Կողմի համար և հաջորդող յուրաքանչյուր տարվա համար: Տվյալները ուղարկվում են ոչ ուշ, քան ինը ամիս առաջ այն տարվա ավարտից, որին վերաբերում են:

4. Այն Կողմերի համար, որոնք գործում են 2-րդ հոդվածի 8ա կետի պայմաններին համապատասխան, սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում շարադրված պահանջների համաձայն, ներմուծումների և արտահանումների վիճակագրական տվյալները պետք է բավարարվեն, եթե տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային շահագրգիռ կազմակերպությունը ներկայացնի ներմուծման և արտահանման տվյալներ կազմակերպության և պետությունների միջև, որոնք չեն հանդիսանում այդ կազմակերպության անդամներ:

S. Հոդված 9. Հետազոտում, զարգացում, հասարակության իրազեկություն և տեղեկության փոխանակում

Արձանագրության 9-րդ հոդվածի 1ա կետը փոխարինվում է հետևյալով.

«ա) ամենակատարելագործված տեխնոլոգիաները՝ բարելավելու կարգավորվող և փոխարելի նյութերի անվտանգ պահման, վերականգնման, վերամշակման կամ ոչնչացման կամ էլ այլ կերպ նրանց արտանետումների կրծատման»:

T. Հոդված 10. Ֆինանսական մեխանիզմ

Արձանագրության 10-րդ հոդվածը փոխարինվում է հետևյալով.

Հոդված 10. Ֆինանսական մեխանիզմ

1. Կողմերը ֆինանսական և տեխնիկական համագործակցության ապահովման նպատակով հաստատում են մեխանիզմ՝ ներառելով տեխնոլոգիաների փոխանցումը այն Կողմերին, որոնք գործում են սույն Արձանագրության 5-րդ հոդվածի 1-ին կետի ներքո՝ հնարավոր դարձնելու համար իրենց համապատասխանությունը Արձանագրության 2A-ից 2E հոդվածներում գետեղված կարգավորման միջոցներին: Մեխանիզմը, որին ուղղված ներդրումները կլինեն լրացուցիչ այդ կետի ներքո գործող Կողմերի այլ ֆինանսական փոխանցումներին, ծածկում են այդ Կողմերի բոլոր համաձայնեցված լրացուցիչ ծախսերը՝ հնարավոր դարձնելու համար նրանց համապատասխանությունը Արձանագրության հսկման միջոցներին: Լրացուցիչ ծախսերի մոտավոր դասակարգման ցանկը որոշվում է Կողմերի Հանդիպմանը:

2. 1-ին կետի ներքո հաստատված մեխանիզմը ներառում է Բազմակողմ ֆոնդը: Այն կարող է նաև ընդգրկել բազմակողմ, տարածաշրջանային և երկողմ համագործակցության այլ միջոցները:

3. **Բազմակողմ ֆոնդը.**

ա) հիմնվելով դրամական նպաստի և արտոնությունների վրա և համաձայն Կողմերի կողմից հաստատված օրինաչափության, փակում է համաձայնեցված լրացուցիչ ծախսերը,

- բ) ֆինանսավորում է միջնորդային մեխանիզմի գործարքները՝
- (i) աջակցելով Կողմերին, որոնք գործում են 5-րդ հոդվածի 1-ին կետի ներքո, երկրներում հատուկ հետազոտությունների և այլ տեխնիկական համագործակցության միջոցով հաստատել իրենց պահանջները համագործակցության համար,
- (ii) աջակցել տեխնիկական համագործակցությանը՝ բավարարելու համար այդ առաջացած պահանջները,
- (iii) տարածել համաձայն 9-րդ հոդվածի, տեղեկություն ու համապատասխան նյութեր և կազմակերպել սեմինարներ, ուսուցողական դասընթացներ և այլ առնչվող գործողություններ՝ հօգուտ Կողմերի, որոնք հանդիսանում են զարգացող երկրներ, և
- (iv) աջակցել և դիտանցել այլ բազմակողմ, տարածաշրջանային և երկողմ համագործակցությանը Կողմերի հետ, որոնք հանդիսանում են զարգացող երկրներ, և
- (v) ֆինանսավորել Բազմակողմ ֆոնդի քարտուղարական ծառայությունները և այլ՝ առնչվող աջակցման ծախսերը:

4. Բազմակողմ ֆոնդը գործում է այն Կողմերի դեկավարության ներքո, որոնք որոշում են նրա քաղաքականության ընդհանուր ուղղությունները:

5. Կողմերը հաստատում են Գործադիր հանձնաժողով՝ զարգացնելու և դիտանցելու հատուկ հրատապ քաղաքականությունների, ուղեցույցների և վարչական կարգավորումների իրականացումը՝ ներառելով միջոցների տնօրինումը՝ Բազմակողմ ֆոնդի նպատակներին հասնելու համար: Գործադիր հանձնաժողովը կատարում է իր առաջադրանքներն ու պարտավորությունները՝ համաձայն նշված տեխնիկական առաջադրանքների, որը կրնդունվի Կողմերի համաձայնությամբ, համագործակցելով և աջակցություն ստանալով Վերականգնման և զարգացման միջազգային բանկից (Համաշխարհային բանկ), ՍՍԿ-ի Ծրջակա միջավայրի ծրագրից, ՍՍԿ-ի Զարգացման ծրագրից կամ այլ համապատասխան գործակալություններից՝ կախված նրանց բնագավառի փորձից: Գործադիր հանձնաժողովի անդամները, որոնք ընտրվում են՝ հիմնվելով 5-րդ հոդվածի 1-ին կետի ներքո գործող և չգործող Կողմերի հավասարակշիռ ներկայացուցությամբ, հաստատվում են Կողմերով:

6. Բազմակողմ ֆոնդը ֆինանսավորվում է 5-րդ հոդվածի 1-ին կետի ներքո չգործող Կողմերի ներդրումներով, փոխարկելի արտարժույթով կամ, հատուկ դեպքերում, սպասարկումներով և/կամ պետական արտարժույթով՝ հիմնվելով ՍՍԿ-ի վճարային սանդղակի վրա: Խրախուսվում են այլ Կողմերի վճարները: Երկողմ և, հատուկ դեպքերում, համաձայնեցված Կողմերի որոշմամբ՝ տարածաշրջանային համագործակցությունը կարող է, Կողմերի որոշմամբ, նշված օրինաչափության տոկոսայնությամբ և կայունությամբ ընդունվել որպես ներդրում Բազմակողմ ֆոնդ այն դեպքում, եթե նման համագործակցությունը նվազագույնը՝

- ա) ուղղակիորեն գործում է սույն Արձանագրության պայմաններին համաձայն,
- բ) ապահովում է լրացուցիչ ռեսուրսներ, և
- ց) փակում է համաձայնեցված լրացուցիչ ծախսերը:

7. Կողմերը հաստատում են Բազմակողմանի ֆոնդի ծրագրային բյուջեն յուրաքանչյուր դրամական ժամանակաշրջանում և որոշում են անհատական Կողմերի ներդրումների տոկոսային չափը:

8. Բազմակողմանի ֆոնդի միջոցները պետք է վճարվեն շահառու Կողմի համաձայնությամբ:

9. Կողմերի որոշումները սույն հոդվածի ներքո ընդունվում են, ըստ հնարավորության, միաձայն: Եթե միաձայնության գալու բոլոր ջանքերը սպառվում են, և միաձայնություն ձեռք չի բերվում, ապա որոշումները ընդունվում են քվեարկությանը ներկա գտնվող և քվեարկող Կողմերի ձայների մեծամասնության երկու երրորդով, որոնք ներկայացնում են 5-րդ հոդվածի 1-ին կետի ներքո գործող Կողմերի մեծամասնությունը և նաև այն Կողմերի քվեարկությանը ներկա գտնվող և մասնակցող մեծամասնությունը, որոնք չեն գործում 5-րդ հոդվածի 1-ին կետի ներքո:

10. Սույն հոդվածում ներկայացված ֆինանսական մեխանիզմը չի խափանում ոչ մի հետագա համաձայնություն, որը կարող է մշակվել՝ լուծելու համար բնապահպանական այլ խնդիրներ:

Ա. Հոդված 10A. Տեխնոլոգիայի փոխանցումը

Հետևյալ հոդվածը պետք է ավելանա Արձանագրությանը՝ որպես 10A հոդված.

Հոդված 10A. Տեխնոլոգիայի փոխանցումը

Յուրաքանչյուր Կողմ նախաձեռնում է ցանկացած իրազործելի քայլ, համընկնող ֆինանսական մեխանիզմով ապահովված ծրագրերին, երաշխավորելու, որ.

ա) ամենամատելի, էկոլոգիապես անվտանգ փոխանյութերը և համապատասխան տեխնոլոգիաները արագորեն փոխանցվեն 5-րդ հոդվածի 1-ին կետի ներքո գործող Կողմերին, և

բ) «ա» ենթակետում հիշատակված փոխանցումները իրականանա արդար և բարենպաստ պայմաններում:

Վ. Հոդված 11. Կողմերի Հանդիպումները

Արձանագրության 11-րդ հոդվածի 4ց կետը փոխարինվում է հետևյալով.

ց) «համաձայն 6-րդ հոդված՝ գնահատում են հսկման միջոցները և փոխադրելի նյութերին վերաբերող իրավիճակը»:

Ո. Հոդված 17. Ուժի մեջ մտնելուց հետո Կողմերի միացումը

17-րդ հոդվածի «ինչպես նաև» բառերից հետո ավելանում են հետևյալ բառերը. «2Ա-ից 2Ե հոդվածներ»:

Խ. Հոդված 19. Դուրս գալը

Արձանագրության 19-րդ հոդվածը փոխարինվում է հետևյալ կետով.

«Յանկացած Կողմ կարող է դուրս գալ սույն Արձանագրությունից՝ ավանդապահին ցանկացած ժամանակ ներկայացնելով գրավոր ծանուցում 2Ա հոդվածի 1-ին կետում նշված պարտավորությունները ստանձնելուց չորս տարի հետո: Դուրս գալն ուժի մեջ է մտնում ծանուցագիրը ավանդապահի ստանալու ամսաթվից հետո մեկ տարին լրանալուն պես կամ ավելի ուշ ամսաթվով, որը հնարավոր է՝ նշված լինի դուրս գալու ծանուցագրում:

Ե. Հավելվածներ

Արձանագրությանը կցվում են հետևյալ հավելվածները.

Հավելված B. Կարգավորվող նյութեր

| Խումբը | Նյութը | Օգնն քայլայող պոտենցիալը |
|---|---|-----------------------------|
| I | | |
| CF ₃ Cl | (ՔՖԱ-13) | 1.0 |
| C ₂ FCl ₅ | (ՔՖԱ-111) | 1.0 |
| C ₂ F ₂ Cl ₄ | (ՔՖԱ-112) | 1.0 |
| C ₃ FCl ₇ | (ՔՖԱ-211) | 1.0 |
| C ₃ F ₂ Cl ₆ | (ՔՖԱ-212) | 1.0 |
| C ₃ F ₃ Cl ₅ | (ՔՖԱ-213) | 1.0 |
| C ₃ F ₄ Cl ₄ | (ՔՖԱ-214) | 1.0 |
| C ₃ F ₅ Cl ₃ | (ՔՖԱ-215) | 1.0 |
| C ₃ F ₆ Cl ₂ | (ՔՖԱ-216) | 1.0 |
| C ₃ F ₇ Cl | (ՔՖԱ-217) | 1.0 |
| II | | |
| CCl ₄ | Ածխածնի տետրաքլորիդ | 1.1 |
| III | | |
| C ₂ H ₃ Cl ₃ * | 1,1,1-Եռաքլորէթան* (մեթիլ քլորոֆորմ) | 0.1 |

- Այս բանաձևը չի վերաբերում 1,1,2- եռաքլորէթանին:

Հավելված C. Անցումային նյութեր

| Խումբը | Նյութը |
|--|------------|
| I | |
| CHFCl ₂ | (ՀՔՖԱ-21) |
| CHF ₂ Cl | (ՀՔՖԱ-22) |
| CH ₂ FCl | (ՀՔՖԱ-31) |
| C ₂ HFCl ₄ | (ՀՔՖԱ-121) |
| C ₂ HF ₂ Cl ₃ | (ՀՔՖԱ-221) |
| C ₂ HF ₃ Cl ₂ | (ՀՔՖԱ-123) |
| C ₂ HF ₄ Cl | (ՀՔՖԱ-124) |
| C ₂ H ₂ FCl ₃ | (ՀՔՖԱ-131) |
| C ₂ H ₂ F ₂ Cl ₂ | (ՀՔՖԱ-132) |
| C ₂ H ₂ F ₃ Cl | (ՀՔՖԱ-133) |
| C ₂ H ₃ FCl ₂ | (ՀՔՖԱ-141) |
| C ₂ H ₃ F ₂ Cl | (ՀՔՖԱ-142) |
| C ₂ H ₄ FCl | (ՀՔՖԱ-151) |
| C ₃ HFCl ₆ | (ՀՔՖԱ-221) |
| C ₃ HF ₂ Cl ₅ | (ՀՔՖԱ-222) |
| C ₃ HF ₃ Cl ₄ | (ՀՔՖԱ-223) |
| C ₃ HF ₄ Cl ₃ | (ՀՔՖԱ-224) |
| C ₃ HF ₅ Cl ₂ | (ՀՔՖԱ-225) |

| | |
|--|------------|
| C ₃ HF ₆ Cl | (ՀՔԲԱ-226) |
| C ₃ H ₂ FCl ₅ | (ՀՔԲԱ-231) |
| C ₃ H ₂ F ₂ Cl ₄ | (ՀՔԲԱ-232) |
| C ₃ H ₂ F ₃ Cl ₃ | (ՀՔԲԱ-233) |
| C ₃ H ₂ F ₄ Cl ₂ | (ՀՔԲԱ-234) |
| C ₃ H ₂ F ₅ Cl | (ՀՔԲԱ-235) |
| C ₃ H ₃ FCl ₄ | (ՀՔԲԱ-241) |
| C ₃ H ₃ F ₂ Cl ₃ | (ՀՔԲԱ-242) |
| C ₃ H ₃ F ₃ Cl ₂ | (ՀՔԲԱ-243) |
| C ₃ H ₃ F ₄ Cl | (ՀՔԲԱ-244) |
| C ₃ H ₄ FCl ₃ | (ՀՔԲԱ-251) |
| C ₃ H ₄ F ₂ Cl ₂ | (ՀՔԲԱ-252) |
| C ₃ H ₄ F ₃ Cl | (ՀՔԲԱ-253) |
| C ₃ H ₅ FCl ₂ | (ՀՔԲԱ-261) |
| C ₃ H ₅ F ₂ Cl | (ՀՔԲԱ-262) |
| C ₃ H ₆ FCl | (ՀՔԲԱ-271) |

Հոդված 2. Ուժի մեջ մտնելը

- Սույն Ուղղումը ուժի մեջ է մտնում 1992թ. հունվարի 1-ից. այն դեպքում, եթե Ուղղման վավերացման, ընդունման և հաստատման վերաբերյալ առնկազն քանի փաստարության մեջ պահ է հանձնվել պետությունների կամ տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունների կողմից, որոնք հանդիսանում են օգոս քայլայող նյութերի մասին Մոնրեալի Արձանագրության Կողմ: Այն դեպքում, եթե այս պայմանը չի կատարվում ժամկետին, Ուղղումը մտնում է ուժի մեջ պայմանի կատարման իննուուներորդ օրը:
- 1-ին կետի նպատակների համար ի պահ հանձնված ցանկացած նման փաստարության տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպության կողմից չի համարվում լրացուցիչ այն փաստաթղթերին, որոնք ներկայացվել են կազմակերպության անդամ երկրների կողմից:
- Սույն Ուղղումը ուժի մեջ մտնելուց հետո, համաձայն 1-ին կետի, Արձանագրության ցանկացած այլ Կողմի համար այն ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերը ի պահ հանձնելու ամսաթվին հաջորդող իննուուներորդ օրը:

*Ուղղումը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2004 թվականի փետրվարի 24-ից: